ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀԱԿԱՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՐՈԶՉՈՒԹՅՈՒՆԸ 1918-1920 ԹԹ.

ՂՈՒԼՅԱՆ ՅՈՒ. Վ.

1918-1920 թթ. հայ-ադրբեջանական լարված հարաբերությունները կողմերի միջև եղած սահմանային խնդիրների հետևանք էին: Հայաստանի Հանրապետությունը մտադիր չէր հրաժարվել Նախիջևանի, Զանգեզուրի, Ղարաբաղի և հայկական մյուս տարածքների նկատմամբ ունեցած իր իրավունքներից: Իսկ Ադրբեջանը հայկական տարածքները բռնակցելու ճանապարհին դիմում էր ցանկացած քայլի՝ բանակն էր համախմբում Հայաստանի սահմանների մոտ, ոտքի հանում Հայաստանի թուրք բնակչությանը՝ դրդելով չճանաչել ՀՀ իշխանությունը, Հայաստանին տնտեսական ծանր կացության մեջ դնելու նպատակով հրաժարվում էր տալ նավթ, հաց և կենսական այլ ապրանքներ, լրտեսում երկիրը:

Ադրբեջանի թշնամական գործելակերպի բնորոշ կողմերից էր Հայաստանի դեմ քարոզչական-լրատվական պատերազմի իրականացումը: Այն կիրառվում էր ինչպես Ադրբեջանում, այնպես էլ դրա սահմաններից դուրս՝ Հայաստանում, Վրաստանում, Եվրոպայում: Եթե տեղում այն օգտագործվում էր թուրք ամբոխին հայության դեմ հանելու, հայ բնակչության նկատմամբ ձերբակալություններ, հետապնդումներ իրականացնելու, պարբերաբար հայկական ջարդեր կազմակերպելու և Հայաստանի դեմ ռազմական գործողություններն արդարացնելու նպատակով, ապա արտերկրում՝ Հայաստանին վարկաբեկելու և չեզոքացնելու[1], մեծ տերությունների մոտ իրենց վայրագությունները քողարկելու համար: Ադրբեջանի հակահայկական քարոզչությունը գործի դրվեց Անդրկովկասի երեք անկախ հանրապետությունների հռչակումից անմիջապես հետո: Օգտվելով երկրամասի թուրքական զինագրավումից և ստանալով նրանց օժանդակությունը՝ մուսավաթականները Ելիզավետպոլի ու Բաքվի նահանգներում կազմակերպեցին հայ բնակչության կոտորածներ՝ խավարամիտ ամբոխին հայերի դեմ հանելու գործում որպես զենք օգտագործելով հակահայկական քարոզչությունը: Այն առավելապես դրսևորվեց Բաքվի սեպտեմբերյան իրադարձությունների ժամանակ, երբ զոհ գնաց 30000 հայ: Բաքվի հայության կոտորածների առիթով Վրաստանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ Արշակ Ջամալյանի բողոքին ի պատասխան՝ Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցիչ Ջաֆարովը ջարդերը որակեց որպես էքսցեսներ, զոհերի թիվը համարեց ներկայացվածից խիստ պակաս և սխալ՝ այն մեղադրանքը, որ Ադրբեջանն ուշացումով է միջոցներ ձեռնարկել կոտորածին վերջ տալու համար[2]:

---

[1] Տե՛ս **Ռուբին,** Հայ հեղափոխականի մը հիշատակները, հ. Է, Ե., 1991, էջ 192:
[2] Տե՛ս Աշխատավոր, Թիֆլիս, 23.X.1918:

Ադրբեջանի հակահայկական քարոզչությունը 1918 թ. հունիս-նոյեմբեր ամիսներին գործում էր անխափան, քանի որ հայերի նկատմամբ իր գործողություններում նա կաշկանդված չէր: Իրավիճակը փոխվեց Առաջին աշխարհամարտում Թուրքիայի կրած պարտությունից հետո, երբ երկրամասից թուրքական զորքերի հեռանալուց հետո անհրաժեշտություն առաջացավ դաշնակից հրամանատարության առջև հայերի նկատմամբ իրենց վայրագությունները կոծկելու: Ադրբեջանի կառավարությունը, նկատի ունենալով առաջիկայում հրավիրվելիք միջազգային կոնֆերանսը, որտեղ շատ հարցերի թվում նախատեսվում էր լուծում տալ փոքր ազգությունների քաղաքական ճակատագրերին, ձեռնամուխ եղավ հայերի կողմից Ելիզավետպոլի ու Բաքվի նահանգների մահմեդականների նկատմամբ իրականացված «բռնությունների» մասին փաստացի նյութեր հավաքելուն: Այդ նպատակով Ադրբեջանը ստեղծեց, այսպես կոչված, «արտակարգ հետաքննական հանձնաժողովներ»՝ կազմված փորձառու չեզոք քննիչներից, գերազանցապես՝ ռուս ազգության, և ուղարկեց այն շրջանները, որտեղ տեղի էին ունեցել հայ-թաթարական բախումները: Ադրբեջանի նպատակն էր հայ բնակչության նկատմամբ մուսուլմանների իրականացրած բոլոր դաժանությունների համար այդ նյութերով արդարանալը:

Նկատենք, որ Հայաստանում գոյություն ունեցող տեղեկատվական բյուրոն ստեղծման օրից փաստական նյութեր էր հավաքում հայ բնակչության նկատմամբ կատարված ու կատարվող բռնությունների մասին, որտեղ էլ դրանք իրականացված լինեին: Բայց դրանք չէին կարող փոխարինել Ադրբեջանի «հավաքած» քննչական նյութերին: Ելնելով ստեղծված իրավիճակից՝ Վրաստանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությանը կից գործող տեղեկատվական բյուրոն հայ բնակչության նկատմամբ մուսավաթականների դաժանությունների վերաբերյալ նյութերի հավաքումը կազմակերպելու մասին հաշվետու գրությամբ ՀՀ հավատարմատարի միջոցով դիմեց ՀՀ կառավարությանը: Այնտեղ մասնավորապես կարծիք էր հայտնվում ադրբեջանականին նման հանձնաժողովի ստեղծման անհրաժեշտության մասին ինչպես Հայաստանի, այնպես էլ Վրաստանի ու Ադրբեջանի սահմաններում, ամենուր, որտեղ հայ բնակչությունը բռնությունների էր ենթարկվել թուրք-թաթարների կողմից: «Այդպի-սի կազմակերպությունները ինչպես Հայաստանի, այնպես էլ Վրաստանի սահմաններում ոչ իրավական, ոչ էլ փաստական տեսանկյունից դժվարություն չեն կարող ներկայացնել, միայն Ադրբեջանում դրանք պետք է աշխատեն անձայն,- գրում էր տեղեկատվական բյուրոյի պետ Ա. Մալխասյանը,- Բաքվի հանձնաժողովի կազ-մակերպման համար անհրաժեշտ է որոշակի շտապողականություն, քանզի քանի դեռ թարմ են իրականացված հանցագործությունների հետքերը, հնարավոր է դրանք ամբողջովին սրբագրել և արձանագրել»[3]:

[3] *Нагорный Карабах в 1918-1923 гг. (сборник документов и материалов), Е., 1992, с. 40-42.*

1918 թ. նոյեմբերի 17-ին անգլիական բանակի մուտքը Բաքու[4] ազդարարեց Անդրկովկասում նոր քաղաքական ուժի հայտնվելու փաստը: Հայ ժողովուրդը մեծ ոգևորությամբ ընդունեց այդ լուրը, բայց կարճ ժամանակ անց, անգլիացիների ադրբեջանամետ պահվածքի պատճառով, ոգեվորությունը տեղի տվեց հիասթափության: Զրկվելով թուրքական սվինների աջակցությունից՝ Ադրբեջանը նոր պայմաններում անգլիացիներին սիրաշահելու քաղաքականություն էր վարում՝ դառնալով նրա շահերի արտահայտիչը Անդրկովկասում[5]: Անգլիացիների ժամանումով սկիզբ դրվեց հայ-ադրբեջանական հարաբերությունների նոր փուլին, որի բնորոշ կողմն այն էր, որ Ադրբեջանն արդեն իր ծրագրերն իրականացնում էր՝ անգլիացիներին պաշտպան ունենալով: Ադրբեջանի կառավարության 1919 թ. հունվարի 15-ի որոշումը՝ Շուշիի, Զանգեզուրի, Ջիբրայիլի, Ջիվանշիրի շրջաններում զեներալ նահանգապետություն հաստատելու մասին[6], ապացուցեց, որ Ադրբեջանը մտադիր չէ հրաժարվել Ղարաբաղին ու Զանգեզուրին տիրելու իր պլաններից: Որոշումն ընդունվեց անգլիական հրամանատարության գիտությամբ ու հավանությամբ:

Հայ-ադրբեջանական հարաբերությունները նոր սրությամբ դրսևորվեցին 1919 թ. սկզբին, որն արդյունք էր սահմանային հարցերում կողմերի անհամաձայնության: Ադրբեջանի հակահայկական քարոզչության նպատակը Ղարաբաղին տիրելու ճանապարհին Ադրբեջանի նվաճողական ծը-րագրերը արդարացնելն էր: Քարոզչությունը լայն ծավալ ստացավ հատկապես Գանձակի նահանգում՝ ինչպես Գանձակ քաղաքում, այնպես էլ գյուղերում, որտեղ «Անատոլիայի զինվորներ» ստորագրությամբ թռուցիկներ էին տարածվում՝ թուրք բնակչությանը հրավիրելով հանդես գալ հայերի դեմ՝ Անդրանիկի գործողությունների դիմաց վրեժ լուծելու պատճառաբանությամբ[7]: Այդ քարոզչությունը թուրք բնակչության շրջանում լայն արձագանք էր գտնում: Չարդախլի-Բադա շրջանում, օրինակ, մահմեդականները զենք ու փամփուշտ էին գնում՝ յուրաքանչյուր փամփուշտի համար վճարելով 7 ռուբլի[8]:

Քանի որ հանրապետությունների միջև դեռևս հաստատված չէին դիվանագիտական հարաբերություններ, ՀՀ կառավարությունը չէր կարողանում ինչ-որ կերպ ազդել անմիջականորեն ադրբեջանական իշխանությունների վրա: Տեղի հայության շահերի պաշտպանությունն իրականացնում էին Բաքվի Հայոց ազգային խորհուրդն ու Ադրբեջանի պառլամենտի հայկական ֆրակցիան: Վերջինս Գանձակի նահանգում տարվող հակահայկական քարոզչության առիթով մարտի 3-ին հանդես եկավ հայտարարությամբ: Այդ հայտարարությանը Ադրբեջանի ՆԳ նախարարը պատասխանեց, որ «իր մինիստրության մեջ այդօրինակ տեղեկություն-

---

[4] Տե՛ս Զանգ, Ե., 21XI.1918:

[5] **Токаржевский Е. А.,** *Из истории иностранной интервенции и гражданской войны в Азербайджане, Баку, 1957, с. 18.*

[6] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 244, թ. 1:

[7] Մշակ, 15.III.1919:

[8] Նույն տեղում:

ներ չկան, և Գանձակի նահանգապետին առաջարկել է այդ մասին իրազեկ դարձնել իրեն»[9]:

Ադրբեջանում հակահայկական կրքերի բորբոքման գործում մեծ էր ադրբեջանական մամուլի դերը: Օր չկար, որ «Ազերբայջան» պաշտոնաթերթում հակահայկական որևէ նյութ տպագրված չլիներ: Կեղծելով փաստերը՝ լուրեր էին տարածում Հայաստանում մահմեդականների նկատմամբ իրականացվող «բռնությունների մասին»: Այդպիսի հաղորդագրությունների հիմնական մասը վերաբերում էր Նախիջևանին: Նախիջևանում հայկական վարչության հաստատումից հետո ադրբեջանական կողմն ավելի ընդլայնեց կեղծ ու չափազանցված լուրերի տարածման գործը՝ հայկական կողմին մեղադրելով զանգվածային բռնությունների կազմակերպման մեջ, մինչդեռ հայկական իշխանությունների կողմից ոչ մի բռնություն չէր գործադրվում, իսկ եղած մեկ-երկու դեպքերը կրում էին մասնավոր բնույթ: Երևանում Ադրբեջանի ներկայացուցիչ Խան-Թեքինսկին իր կառավարությանը հղած հունիսի 22-ի հեռագրում տեղեկացնում էր. «Նախիջևանում հայերի կողմից մուսուլմանների սպանություն լինում է մասնավոր բնույթի հողի վրա՝ ինչպես՝ հայերն են բացատրում»[10]: Փաստերի կեղծումն ու դեպքերի ուռճացումը հետագայում Ադրբեջանին պետք էին գալու ՀՀ-ի դեմ Նախիջևանում սկսված ապստամբությունն արդարացնելու համար: Միաժամանակ, նման լուրերի տարածումը երկրում հասարակական կարծիք ու վերաբերմունք էր ձևավորում նախիջեվանյան դեպքերի նկատմամբ: Մյուս կողմից՝ ապատեղեկատվությամբ փորձում էին կարծիք ստեղծել ինչպես դաշնակից պետությունների ներկայացուցիչների, այնպես էլ Անդրկովկասի ազգաբնակչության շրջանում: Այդ գործում ադրբեջանական մամուլից հետ չէր մնում վրացականը, որի էջերում նույնպես կարելի էր հանդիպել «մուսուլմանների նկատմամբ հայերի գործադրած երևակայական բռնությունների մասին հրապարակումների»[11], որոնք շիկացնում էին առանց այդ էլ լարված մթնոլորտը: Հայկական կողմին պարտադրված տեղեկատվական պատերազմը մտահոգում էր ինչպես Ադրբեջանի հայությանը, այնպես էլ նրա ղեկավար մարմնին՝ Բաքվի Հայոց ազգային խորհրդին: Վերջինս լավ էր հասկանում, որ մամուլով նման լուրերի տարածումն Ադրբեջանում առաջ է բերում հայերի նկատմամբ թշնամական նոր ալիք, որը կարող է ամեն պահ վերածվել հայկական կոտորածի: Ադրբեջանական մամուլի հակահայկական պահվածքից մտահոգված՝ Բաքվի Հայոց ազգային խորհրդի նախագահը Հայաստանում մահմեդականների դրության և ադրբեջանական մամուլում տարածված հաղորդագրությունների մասին հայցով դիմեց Հայաստանի արտգործնախարար (1919 թ. հուլիսից՝ վարչապետ) Ալ. Խատիսյանին, որը պատասխան հեռագրով (10.VI.1919) դրանք համարեց մտացածին ու հիմքից զուրկ. «Ձեր կողմից տեղական մամուլում նշված հաղորդագրություններն իրականությանը չեն համապատասխանում:

[9] Նույն տեղում, 26.III.1919:
[10] **Զոհրաբյան Է.,** Նախիջևանյան հիմնահարցը և Հայաստանի «դաշնակիցները», Ե., 2002, էջ 128:
[11] Նույն տեղում:

Վերջին հինգ ամիսների ընթացքում չի եղել մահմեդականների նկատմամբ բռնության ոչ մի դեպք: Հայկական կառավարությունը շատ կցան-կանար Ադրբեջանում հայերի իրավական դրությունը տեսնել այնպիսին, ինչպիսին մահմեդականների իրավական դրությունն է Հայաստանում, ինչը կարող է հաստատել Ադրբեջանի ներկայացուցիչ Խան-Թեքինսկին: Իսկ տեղեկությունները, որոնք տպված են «Ադրբեջան» թերթում, արժա-նի չեն ուշադրության»[12]:

Ադրբեջանի հետապնդումները դրսևորվում էին ոչ միայն հայ բնակչության, այլ նաև հայ հոգևորականության, հայկական կազմակերպությունների, անգամ Բաքվի ՀՀ դիվանագիտական ներկայացուցչության նկատմամբ: Մասնավորապես, Բաքվի հայոց առաջնորդարանը, զենք գտնելու պատրվակով, 1919 թ. հունիսին ենթարկվեց խու-զարկության, որի ժամանակ, բացի հիվանդանոցային սպիտակեղենից ու իրերից, որոնք պատկանում էին ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությանը, ոչինչ չգտնվեց[13]: Մինչդեռ «Ազերբայջան» պաշտոնաթերթը 1919 թ. հունիսի 13-ի համարում գրեց, որ «հայկական եկեղեցու նկուղում խուզարկության արդյունքում հայտնաբերվել է շատ զենք, գնդացիրներ, ահռելի քանակությամբ փամփուշտներ և սպառազինության շատ ուրիշ իրեր»[14]:

Բաքվի հայերի հոգևոր առաջնորդը կարծում էր, որ իշխանություններն ու մամուլը մուսուլմանական մասի բնակչությանը միտումնավոր կերպով տրամադրում են հայերի դեմ: Ուստի, բնակչությանը հանգստացնելու համար խնդրում էր Ադրբեջանի կառավարության անունից պաշտոնապես հերքել կեղծ լուրերը՝ եկեղեցու նկուղում զենքի հայտնաբերման մասին[15]:

Հայ-ադրբեջանական հարաբերությունների բնականոն զարգացմանը կարող էր նպաստել միմյանց վերաբերյալ դրական քարոզչությունը: Եվ այն մշտապես Հայաստանի կառավարության ուշադրության կենտրոնում էր: Խնդիրը պարբերաբար քննարկման նյութ էր դառնում տարբեր մակարդակի հանդիպումների ու բանակցությունների ժամանակ: ՀՀ ղեկավարությունը ադրբեջանական իշխանությունների ու կառավարության առջև խնդիրը բարձրացնում էր Ադրբեջանում Հայաստանի ներկայացուցչի միջոցով: Այսպես, Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Տ. Բեկզադյանը, Թիֆլիս ու Երևան կատարած ծառայողական գործուղումից վերադառնալով, 1919 թ. հուլիսի 6-ին այցելեց Ադրբեջանի նախարարների խորհրդի նախագահ Ն. Ուսուբբեկովին և ԱԳ նախարար Մ. Ջաֆարովին: Հանդիպման ընթացքում մի շարք խնդիրների հետ զրույցի նյութ դարձավ նաև պաշտոնական ու ոչ պաշտոնական մամուլի վրա ներգործելու միջոցների մասին հարցը, որպեսզի մամուլը զերծ մնա Հայաստանում մահմեդականների դրության մասին կեղծ տեղեկությունների

---

[12] Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում 1918-1920 թթ., Ե., 2003, էջ 346:
[13] **Hovanisian R.,** *The Republic of Armenia, vol. 2, Berkeley-Los Angeles-London, 1982, p. 186.*
[14] Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում 1918-1920 թթ., էջ 353:
[15] Նույն տեղում:

հրապարակումից, քանի որ այդ լուրերը միայն խորացնում են թշնամանքը և փչացնում ազգամիջյան հարաբերությունները[16]:

Զանգեզուրի դեմ ռազմական արշավանքի նախապատրաստվող Ադրբեջանն ուժեղացված քարոզչություն էր տանում նաև սևծովյան շրջանի թուրքական զորքերի շրջանում՝ ձգտելով թուրք սպաներին ընդգրկել ադրբեջանական զորքերի մեջ: Իրենց հակահայկական ծրագրերի իրականացման ճանապարհին ադրբեջանական իշխանություններն օգտագործում էին պանիսլամիստական գաղափարախոսությունը: Նախիջևանում հայկական իշխանության դեմ բռնկվեց մահմեդական բնակչության ապստամբություն, և հայկական ուժերը հարկադրված էին հեռանալ երկրամասից: Ադրբեջանի այդ հաջողությունը պայմանավորված էր նրա գործակալների միջոցով տեղի մուսուլման բնակչության շրջանում ծավալած լայն քարոզչական աշխատանքով:

ՀՀ-ի դեմ իր գործողություններն արդարացնելու և միջազգային հանրությանը ապակողմնորոշելու նպատակով Ադրբեջանը քարոզարշավ ծավալեց Եվրոպայում՝ Փարիզի խաղաղության կոնֆերանսին մասնակից իր պատվիրակության միջոցով: Պատվիրակության ղեկավար Ալի Մարդան-բեկ Թոփչիբաշևը 1919 թ. օգոստոսի 20-ին խաղաղության կոնֆերանսին հղած դիմումում նախազգուշացնում էր երկրամասի էթնիկական ու տարածքային բնութագիրը ահաբեկչության, բռնության միջոցով փոխելու մասին՝ հայկական կողմին մեղադրելով մուսուլման բնակչությանը ճնշելու, վերացնելու «դիտավորության» մեջ: Նշվում էր հայերի կողմից թաթարական գյուղերի գրավման, տղամարդկանց սպանության, իսկ կանանց «հայ մարտիկների»[17] միջև բաժանելու մասին: Ադրբեջանական կողմն այդ կերպ հող էր նախապատրաստում հետագա գործողություններն արդարացնելու համար:

Ադրբեջանում սկսված հակահայկական քարոզարշավի ու Ադրբեջանի նվաճողական նպատակների մասին 1919 թ. սեպտեմբերի 22-ին ՀՀ ԱԳ նախարարին ուղղված նամակում Ադրբեջանում ՀՀ ներկայացուցիչ Տ. Բեկզադյանը լրագրական այդ աղմուկը համարում էր տաճկա-ադրբեջանական գործակալների կազմակերպած գործ, որը մի նպատակ ուներ. «Օր առաջ լրագրական այդ սուտ ու սխալ հաղորդագրություններով հասարակական տրամադրություն ստեղծել, և եթե մոտ ապագայում այս կամ այն հայկական շրջանի դեմ հարձակումներ սկսելու լինեն, հիմնավորել և արդարացնել կարողանան՝ իբրև թուրք ժողովրդի արդար զայրույթի արդյունք»[18]: Տ. Բեկզադյանը ՀՀ ԱԳ նախարարին խնդրում էր այդ ամբաստանությունները պաշտոնապես հերքելու համար անհրաժեշտ միջոցառումներ ձեռնարկել: Նույն օրը Ադրբեջանի արտգործնախարար Մ. Ջաֆարովն իր կառավարության անունից հայտագրով դիմեց Հայաստանին, որտեղ խիստ բողոք էր հայտնում մահմեդականների դեմ կազմակերպված «գազանությունների»[19] համար: Ադրբեջանը նույն Ջաֆա-

---

[16] ՀԱԱ, ֆ. 278, ց. 1, գ. 3, թ. 37, Նոր Աշխատավոր, Թիֆլիս, 12.VII.1919:
[17] **Hovanisian R.,** նշվ. աշխ., էջ 180:
[18] Նույն տեղում:
[19] Յառաջ, Ե., 4.X.1919:

րովի միջոցով, նախքան Զանգեզուրի վրա լայնամասշտաբ հարձակման անցնելը, ռադիո-տեղեկագիր ուղարկեց նաև եվրոպական պետությունների կառավարություններին՝ Հայաստանում մահմեդականների հանդեպ ցույց տրված «վայրագությունների մասին»[20], որը լույս տեսավ «Ազերբայջան» պաշտոնաթերթում: Հետևողականորեն միտումնավոր լուրեր հաղորդելով՝ «Ազերբայջանը» աշխատում էր հասարակությանը համոզել, թե Հայաստանի կառավարությունը հարստահարում է իր սահմաններում ապրող մահմեդականներին, և Զանգեզուրի հայկական իշխանությունը կոտորում ու թալանում է թաթար գյուղացիությանը[21]:

Տ. Բեկզադյանի՝ ՀՀ վարչապետին ուղղված դիմումի պատասխանը չուշացավ. «Ներկա պահին նույն թվականի հոկտեմբերի 13-ին ադմինիստրացիայի և միլիցիայի բաժանմունքի դիրեկտորի անունով պաշտոնական զեկուցումներ են ստացվել Նոր Բայազետի ու Ղարաքիլիսայի գավառային կոմիսարներից, որոնցից երևում է, որ բռնության ու կողոպուտի ոչ մի դեպք մահմեդականների նկատմամբ չի կիրառվել»[22]: ՀՀ կառավարության պաշտոնական պատասխանը Տ. Բեկզադյանի միջոցով հաղորդվեց Ադրբեջանի արտգործնախարարությանը: Ադրբեջանի ձեռնարկած քայլերին ի պատասխան՝ նրա կառավարության սադրիչ քաղաքականության և Նուխու, Արեշի, Շամախու գավառների Ղարաբաղի հայ բնակչության անտանելի դրության մասին ՀՀ արտգործնախարարությունը հանդես եկավ հայտարարությամբ՝ ուղղված եվրոպական երկրների կառավարություններին: Հայտարարության մեջ հայկական կողմը Ադրբեջանին մեղադրեց Հայաստանի դեմ Շարուր-Նախիջևանում ապստամբություններ ու խռովություններ կազմակերպելու մեջ, որի հետևանքով տեղի ունեցավ հայ բնակչության կոտորած[23]: Միայն Նախիջևանի շրջանում զոհվեց 10 հազար հայ, սպանվեցին ու վիրավորվեցին մի քանի հարյուր հայ սպա և զինվոր: Հայերի դեմ մուսուլման գաղթականներին թշնամացնելու նպատակով[24] Զանգեզուրի դեմ ռազմական գործողությունների պատրաստվող Ադրբեջանը փախստականների դրության մասին պարբերաբար հակահայկական հոդվածներ էր հրապարակում՝ ավելի շիկացնելով լարված իրավիճակը: Այսպես, Էհրատ կուսակցության ներկայացուցիչ Մուսաֆա բեգ Ալիբեկովը, նկարագրելով Զանգեզուրի գավառի մուսուլման փախըս-տականների ծայրաստիճան ողբալի դրությունը, խոսում էր հայերի կողմից իբր ավերված 110 մուսուլմանական գյուղերի և դրանցից 70-ի բնակչության ոչնչացման մասին[25]: Զանգեզուրին տիրելու Ադրբեջանի փորձը, հանդիպելով հայկական ուժերի համառ դիմադրությանը, ձախողվեց:

Ադրբեջանի կառավարությունը «Ազերբայջան» պաշտոնաթերթի միջոցով զանգեզուրյան դեպքերը փորձեց պատճառաբանել բոլշևիկյան կամ էլ անիշխանական շարժումները ճնշելու մտադրությամբ, չնայած նպա-

---

[20] Աշխատավոր, 1.X.1919:
[21] Նույն տեղում:
[22] ՀԱԱ, ֆ. 278, ց. 1, գ. 4, թ. 89:
[23] *Нагорный Карабах, с. 346; Слово, Тифлис, 30.X.1919.*
[24] **Hovanisian R.,** նշվ. աշխ., էջ 213:
[25] Յառաջ, 25.X.1919:

տակ ուներ ռազմական ուժերով գրավել Զանգեզուրը[26]: Խայտառակ պարտությունը - քողարկելու համար «Ազերբայջանը» Զանգեզուրի մասին տեղեկատվությունը ընթերցողներին ներկայացրեց ամբողջովին ձևափոխված տեսքով[27]: Թերթերն ու տեղեկատվական մյուս միջոցներն էլ փորձում էին նվազեցնել զանգեզուրյան իրադարձություններում բանակային ընդգրկումը, զոհերի թիվը[28]:

1919 թ. հոկտեմբերի 15-ին ՀՀ կառավարությունը Բաքվի իր ներկայացուցչի՝ Տ. Բեկզադյանի միջոցով հանդես եկավ հայ-ադրբեջանական կոնֆերանս հրավիրելու առաջարկով՝ նախատեսելով լուծել երկու հանրապետությունների միջև գոյություն ունեցող տարածքային վեճերը: Կոնֆերանսի գաղափարն ընդունեց վարչապետ Ուսուբբեկովը: Այդուհանդերձ, Ադրբեջանը հարձակվեց Հայաստանին պատկանող Զանգեզուրի վրա, որով էլ հարցականի տակ դրեց նոյեմբերի 20-ին Բաքվում նշանակված կոնֆերանսի կայացումը[29]: Հակահայկական հրապարակումների առիթով Ադրբեջանում ՀՀ ներկայացուցիչը 1919 թ. նոյեմբերի 19-ին ուղերձով դիմեց Ադրբեջանի մինիստր-նախագահին՝ նշելով, որ հայ-ադրբեջանական կոնֆերանսի նախօրյակին նման գործելակերպը վնասակար է և չի նպաստում երկու հանրապետությունների միջև վստահության մթնոլորտի ստեղծմանն ու հարցերը կոնֆերանսի միջոցով լուծելուն[30]:

1919 թ. նոյեմբերի 23-ին Թիֆլիսում Հայաստանի և Ադրբեջանի վարչապետներ Ալ. Խատիսյանը և Ն. Ուսուբբեկովը ստորագրեցին համաձայնագիր, որով պետք է վերջ տրվեին պատերազմական գործողություններին: Կողմերը պայմանավորվեցին վիճելի համարվող տարածքային հարցերը լուծել խաղաղ բանակցությունների միջոցով[31]: Սակայն դա չխանգարեց, որ Ադրբեջանը շարունակեր Հայաստանին հայտարարված քարոզչական պատերազմը: Ազգամիջյան կրքերի բորբոքման ու փաստերի խեղաթյուրման հարցը քննարկման առարկա դարձավ Ադրբեջանում ՀՀ ներկայացուցիչ Տ. Բեկզադյանի՝ վարչապետ Ն. Ուսուբբեկովին կատարած այցելության ընթացքում՝ 1919 թ. դեկտեմբերի 2-ին[32]: Հարցն այն է, որ Շուշիից տեղեկություններ էին հասել հայկական զինված ուժերի կողմից ադրբեջանական գյուղերի վրա հարձակումների ու կոտորածների մասին, որը տպագրել էր «Ազերբայջանը»: Հանդիպման ընթացքում Տ. Բեկզադյանը նկատում է, որ պաշտոնաթերթի տվյալները իրականությանը չեն համապատասխանում, և որ ինքն անձամբ քարտեզի վրա ստուգել է պաշտոնաթերթում նշված գյուղերը, պարզել, որ Շուշիից ստացված տեղեկություններում նշված շատ գյուղեր ընդհանրապես գոյություն չունեն: Իսկ հանդարտված կրքերը չբորբոքելու համար անհրա-

---

[26] ՀԱՀ, ֆ. 200, ց. 1, գ. 50, թ. 306:
[27] Նույն տեղում, թ. 330:
[28] **Hovanisian R.,** նշվ. աշխ., էջ 220:
[29] ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.50, մաս 2, թթ. 300-302:
[30] Նույն տեղում, ֆ. 278, ց. 1, գ. 38, թ. 73:
[31] Յառաջ, 26.XI.1919:
[32] ՀԱԱ, ֆ. 278, ց. 1, գ. 10, թ. 24:

ժեշտ է խուսափել նման տեղեկություններից՝ չդադարեցնելով բարիդրացիական հարաբերությունների կարգավորման գործը[33]:

Ադրբեջանում հայկական թերթերի, մասնավորապես՝ «Յառաջի» վաճառքի արգելումը ևս քարոզչական պատերազմի ձևերից էր: «Ադրբեջանի խուզարկու ոստիկանությունը անցյալ շաբաթ գրավել է Բաքվի բոլոր կրպակներից «Յառաջի» համարները և առաջարկել ծախողներին, որ այսուհետև չծախեն այդ թերթը»[34]: Պանիսլամիստական ու հակահայկական քարոզչությունը տեղ էր գտնում ոչ միայն Ադրբեջանում, այլև ՀՀ իշխանությանը ենթակա մուսուլմանական շրջաններում՝ Կարսում, Զանգիբասարում և այլ վայրերում: Դրան մասնակցում էին ինչպես թուրքերը, այնպես էլ ադրբեջանցիները: Վերջիններս ակտիվացան հատկապես 1920 թ. սկզբներին, որն օրգանապես կապված էր հայ-ադրբեջանական հարաբերությունների նոր լարվածության ու Ղարաբաղի նկատմամբ Ադրբեջանի նոր դավերի հետ: ՀՀ կառավարությունը կարևորում էր նման դրսևորումների դեմն առնելու անհրաժեշտությունը և մեկ անգամ չէ, որ դրանք դարձնում էր քննարկման հարց: 1920 թ. հունվարի 30-ին Մեծ Բրիտանիայի գերագույն կոմիսար մայոր Ուորդրոպի ներկայությամբ տեղի ունեցած նախարարների խորհրդի արտակարգ նիստում դրվեց նաև հանրապետության մուսուլմանական շրջաններում պանիսլամիստական ու հակահայկական քարոզչությունը դադարեցնելու համար միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտության խնդիրը[35]:

Ադրբեջանը Լեռնային Ղարաբաղին վերջնականապես տիրելու նպատակով 1920 թ. սկզբներին անցավ վճռական գործողությունների՝ նախքան այդ դարձյալ դիմեով թուրք զանգվածների մեջ հայերի հանդեպ թշնամություն սերմանելու փորձված մեթոդին: Գործի հաջողությանը նպաստելու համար իրենց ողջ ուժը ներդրեցին «Իթթիհատ» և «Մու-սավաթ» կուսակցությունները: Իսկ Ադրբեջանի հայաբնակ շրջաններից ու գյուղերից ամեն օր ահազանգեր էին ստացվում, ներկայացվում էր ստեղծված պայթյունավտանգ իրավիճակը. «Հայերի դրությունը, հատկապես Գանձակում կրիտիկական է: Հարկավոր է շտապ միջոցներ ձեռք առնել նրանց կյանքն ու ունեցվածքը փրկելու համար»[36]:

Հայկական Ղարաբաղի դեմ պատերազմ սկսելով՝ Ադրբեջանը միաժամանակ գործողություններ էր իրականացնում հայկական պետականության դեմ՝ ՀՀ տարածքում ապրող մահմեդականների միջոցով, այդ կերպ փորձելով իշխանությունների ուշադրությունը շեղել Ղարաբաղից: Հայաստանի կառավարությանը հաջողվեց ճնշել այդ շարժումները: Շորագյալի, Զուրուշաղի և Չալդըրի շրջաններում վերականգնվեցին հայկական իշխանությունն ու օրինական կարգը: «Ազերբայջանը» ապրիլի 17-ի հա-մարում Կարսի մարզի վերոնշյալ շրջաններում հայկական զորքերի գործողությունների մասին հայտնեց ապշեցուցիչ

---

[33] Նույն տեղում:
[34] Յառաջ, 20.XII.1919:
[35] ՀԱԱ, ֆ. 278, ց. 1, գ. 25, թ. 2:
[36] *Слово, 1.IV.1920.*

տվյալներ, իսկ արտգործնախարարությունը հանդես եկավ հայտարարությամբ՝ հայկական կողմին մեղադրելով «իրականացրած դաժանությունների» մեջ[37]:

Հայաստանի կառավարությունը հերքեց այդ մտացածին տվյալները՝ հայտնելով, որ «մարզում իշխում է լրիվ խաղաղություն»[38]:

Ադրբեջանի հակահայկական քարոզչությունը, միայն Անդրկովկասով չսահմանափակվելով, իրականացվում էր նաև արտաքին աշխարհում՝ Հայաստանին վարկաբեկելու, նրան չեզոքացնելու կամ նրա թշնամիների թիվն ավելացնելու նպատակով[39]: Պարբերաբար մեծ տերությունների ղեկավարներին պաշտոնական զեկուցումներ էին ներկայացվում թաթարների նկատմամբ հայերի կատարած բռնությունների, կոտորածների, գյուղերի ավերման, տեղահանությունների և այլնի վերաբերյալ: Հայկական պատվիրակությունը ստիպված էր դրանց հերքման ճանապարհին մեծ ճիգեր գործադրել:

1920 թ. ապրիլի 28-ին Ադրբեջանը խորհրդայնացվեց: Կարմիր բանակը, նախապես Ադրբեջանի խորհրդարանի և «մուսավաթի» ղեկավարների հավանությունը ստանալով, մտավ Բաքու: Հայ ժողովրդի, ինչպես նաև ՀՀ կառավարության մեջ որոշակի հույսեր առաջացան, որ Ադրբեջանի հետ գոյություն ունեցող թշնամանքը վերջ կունենա, և հնարավոր կլինի լուծել Ղարաբաղի ու Զանգեզուրի սահմանային հարցերը[40]: Սակայն 1920 թ. ապրիլի 29-ին տեղի ունեցած՝ Ադրբեջանի հեղկոմի նիստում ընդունված որոշումներն ապացուցեցին, որ Ադրբեջանի նոր իշխանությունները հավատարիմ են նախկինների վարած քաղաքականությանը: Որոշումներից մեկը վերաբերում էր Ղարաբաղին՝ «Հայաստանին առաջարկել անմիջապես զորքերը դուրս բերել Ղարաբաղից»[41]: Ապրիլի 30-ին, Խորհրդային Ադրբեջանը Հայաստանին վերջնագիր տվեց՝ պահանջելով հայկական զորքերը հանել Ղարաբաղի և Զանգեզուրի տարածքից՝ վերջ դնելով «ազգամիջյան կոտորածներին, հակառակ դեպքում Ադրբեջանի Սովետական Հանրապետության հեղկոմը իրեն պատերազմի մեջ կդնի ՀՀ կառավարության հետ»[42]: Տարածաշրջանում հայտնվել էր նոր քաղաքական ուժ, որն այդ փուլում գործում էր ի վնաս Հայաստանի Հանրապետության: Դա Խորհրդային Ռուսաստանն էր, որից և օգտվում էր Խորհրդային Ադրբեջանը՝ լուծելու համար Հայաստանի հետ իր տարածքային հարցերը: Ադրբեջանի խորհրդայնացումը ոչ միայն չվերացրեց հայադրբեջանական թշնամանքը, այլև հասավ նոր լարվածության: Մուսավաթական Ադրբեջանի նվաճողական ծրագրերը փոխանցվեցին Խորհրդային Ադրբեջանին: Հայաստանի Հանրապետության դեմ պայքարելու գլխավոր միջոցներից մեկը նախկինի նման մնաց հակահայկական քարոզչությունը, որն այս անգամ քողարկվում էր «հայ աշխատավոր բնակչությանը դաշնակների տիրապետությունից ազատագրելու» կեղծ լոզունգով:

---

[37] ՀԱԱ, ֆ. 200, ց.1, գ.411, մաս 2, թ. 106:
[38] Նույն տեղում, թ. 104:
[39] Տե՛ս **Ռուբին,** Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ. Է, էջ 192:
[40] **Hovanisyan R.,** նշվ. աշխ., էջ 185:
[41] *Борьба за победу советской власти в Азербайджане, Баку, 1967, с. 476-477.*
[42] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 427, մաս 2, թ. 273:

Բաքվում մտացածին լուրեր էին տարածվում և տրվում մամուլում Հայաստանում տեղի ունեցող բոլշևիկյան շարժումների մասին: Այդ լուրերի հետևանքով հալածանքների էին ենթարկվում ոչ միայն դաշնակցականները, այլև Դաշնակցությանը հակառակորդ հայ հասարակական մյուս գործիչները[43]: Չհրաժարվելով Հայաստանի դեմ քարոզչական պատերազմի իր ծրագրերից՝ Ադրբեջանը խորհրդային կարգերի ընդունումից հետո որոշ փոփոխություններ մտցրեց իր գործելակերպի ու մարտավարության մեջ: Եթե նախկինում հակահայ քարոզչությունն իրականացվում էր կառավարական մակարդակով, հատուկ գործակալների ու Հայաստանի ադրբեջանաբնակ բնակավայրերի իրենց համակիրների, ապա այժմ՝ նաև Ադրբեջանում ծվարած հայ որոշ բոլշևիկների միջոցով[44]: Ահա թե ինչու Խորհրդային Ադրբեջանի հակահայ քարոզչության հարցը նախկինի նը- ման շարունակում էր մնալ հայկական իշխանությունների ուշադրության կենտրոնում: Մեկ անգամ չէ, որ ՀՀ կառավարությունը Բաքվի իր ներկայացուցչի միջոցով փորձում էր այն դարձնել բանակցությունների առարկա: Այսպես, երկու հանրապետությունների միջև առկա հարցերի քննարկման համար նախատեսվող կոնֆերանսի օրակարգում ՀՀ կառավարությունը նպատակահարմար գտավ քննարկել նաև Ադրբեջանում հակահայ քարոզչության վերացման հարցը[45]: Սակայն կոնֆերանսը, կապված հայ-ադրբեջանական լարված հարաբերությունների հետ, այդպես էլ չկայացավ, իսկ վերոնշյալ խնդիրն էլ մնաց առկախ:

Բաքվի կուսակցական օրգան «Կոմունիստը» ողողված էր Հայաստանում մայիսյան իրադարձություններից հետո բոլշևիկների և նրանց ընտանիքի անդամների դեմ կազմակերպված բռնությունների մասին հաղորդագրություններով[46]: Հանդես գալով նման հաղորդագրություններով՝ Խորհրդային Ադրբեջանը հող էր նախապատրաստում տեղի դաշնակցականների նոր ձերբակալությունների ու գնդակահարությունների համար: «Կոմունիստը» գրում էր, որ Հայաստանը, «որը ղեկավարվում է արյունալի դաշնակցական կառավարության կողմից, հապճեպ պատրաստվում է հարձակվելու Խորհրդային Ադրբեջանի վրա»[47]: Այս ամենն արվում էր Հայաստանի դեմ Ադրբեջանի ագրեսիան արդարացնելու և իր բռնությունները հայ ժողովրդին վերագրելու նպատակով, միաժամանակ, Հայաստանի բոլոր դժբախտությունները կապելով «դաշնակցականների հետ»[48]: Հայ ժողովրդի ու նրա պետականության դեմ Խորհրդային Ադբրբեջանի քարոզչությունը տեղ գտավ նաև 1920 թ. սեպտեմբերի սկզբին (1-7) Բաքվում գումարված Արևելքի ժողովուրդների առաջին համագումարում: Համագումարի ամբիոնից կոչեր արվեցին «Իմպերիալիստական Հայաստանը» ոչնչացնելու մասին, որն իբր, Վրաստանի ու Պարսկաստանի հետ դաշնակցած, մտադիր էր հարձակվել Թուրքիայի ու Ադրբեջանի

---

[43] Տե՛ս Յառաջ, 6.VII. 1920:
[44] Նույն տեղում, 14.VII.1920:
[45] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 365, թ. 57:
[46] Коммунист, 13.VI, 5-6.VIII, 30.VIII-3.IX.1920:
[47] Նույն տեղում, 12.IX.1920:
[48] Նույն տեղում, 25.X.1920:

վրա: Ողբերգականն այն էր, որ այդ քարոզչության տարածմանը մասնակցում էին նաև թուրք ու ադրբեջանցի պատվիրակների ձեռքին գործիք դարձած հայ բոլշևիկ պատվիրակները, որոնք համագումարում իրենց զեկուցման մեջ Հայաստանում տիրող դրության մասին ներկայացնում էին կեղծ տեղեկություններ[49]: Դրա հետևանքով սեպտեմբերի 17-ին «Արևելքի ժողովուրդների պրոպագանդայի և գործողության խորհրդի» նախագահությունը հատուկ որոշում ընդունեց՝ Խորհրդային Ադրբեջանի վրա Հայաստանի ու նրա դաշնակիցների՝ Իրանի ու Վրաստանի հարձակումը կանխելու նպատակով արագացնել Խորհրդային Ռուսաստանի ու քեմալականների միջև կապի հաստատումը: Մի քանի օր անց թուրքական զորքերն արշավեցին Հայաստան: Խորհրդային Ադրբեջանի հակահայ քարոզչությունը շարունակվեց նաև հետագայում՝ ընդհուպ մինչև Հայաստանի խորհրդայնացումը:

АНТИАРМЯНСКАЯ ПРОПАГАНДА АЗЕРБАЙДЖАНА В 1918-1920 ГГ.

ГУЛЯН Ю. В.

Резюме

В 1918-1920 гг. Азербайджан развернул антиармянскую пропа-ганду как в СССР, так и в Европе. Однако если в Азербайджане эта пропаганда преследовала цель настроить местных турок против армянского населения, дабы осуществить антиармянские погромы и оправдать военные действия, направленные против Армении, то за пределами Советского Союза она использовалась с целью дискредитации и нейтрализации Армении. С установлением советской власти в Азербайджане антиармянская пропаганда про-водилась под маской “освобождения армянского трудового насе-ления от господства дашнаков”.

[49] **Զոհրաբյան Է.,** 1920 թ. թուրք-հայկական պատերազմը և տերությունները, էջ 153: